ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում

Կ-990²-24.12.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել նոր 35.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 35.1. Ի կատարումն փոխարկելի փոխառության պայմանագրի Ընկերության բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման կարգը**

1. Ընկերությունը կարող է կնքել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 886.2-րդ հոդվածով սահմանված փոխարկելի փոխառության պայմանագիր:
2. Փոխարկելի փոխառության պայմանագրի (որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու) կնքման մասին որոշումն ընդունում է ժողովը՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի միաձայնությամբ:
3. Ընկերության կանոնադրությամբ կարող է սահմանվել, որ փոխարկելի փոխառության պայմանագրի (որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու) կնքման մասին որոշումն ընդունում է ժողովը՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի ձայների առնվազն 3/4-ով:
4. Եթե ժողովը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով կայացրել է փոխարկելի փոխառության պայմանագիր կնքելու մասին որոշում, ապա այդ որոշմանը դեմ քվեարկած բաժնետերն ունի սույն օրենքի 47-րդ հոդվածով սահմանված նախապատվության իրավունքը: Ընդ որում նախապատվության իրավունքի կիրառման դեպքում Ընկերությունը հատուցում է միայն փոխատուի վնասները՝ ազատվելով պարտավորությունը բնեղենով կատարելուց:
5. Ի կատարումն փոխարկելի փոխառության պայմանագրի, որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու, փոխատուն պայմանագրով սահմանված ժամկետում Ընկերության գործադիր մարմնին է ներկայացնում փոխարկման գրավոր պահանջ: Եթե փոխարկելի փոխառության պայմանագրով նախատեսված է, որ փոխարկումը պայմանավորված է պայմանագրով սահմանված պայմանների վրա հասնելով, փոխարկման գրավոր պահանջը պետք է պարունակի այդ պայմանները վրա հասնելու հիմնավորումը: Փոխարկելի փոխառության պայմանագրով կարող է սահմանվել, որ սույն մասում նշված պահանջը համարվում է ներկայացված՝ պայմանագրով սահմանված պայմանների վրա հասնելու դեպքում:
6. Ի կատարումն փոխարկելի փոխառության պայմանագրի, որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջն Ընկերության գործադիր մարմնի կողմից ստացվելուց (պայմանագրով սահմանված դեպքում՝ ստացված համարվելուց), իսկ եթե փոխարկելի փոխառության պայմանագրով նախատեսված է, որ փոխարկումը պայմանավորված է պայմանագրով սահմանված պայմանների վրա հասնելով, ապա այդ պայմանների վրա հասնելուց և սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջն Ընկերության գործադիր մարմնի կողմից ստացվելուց (պայմանագրով սահմանված դեպքում՝ ստացված համարվելուց) հետո 60-օրյա ժամկետում Ընկերությունը պարտավոր է փոխարկելի փոխառության պայմանագրի համաձայն սահմանված տեսակի, դասի և քանակի բաժնետոմսերը թողարկել և տեղաբաշխել փոխատուի օգտին:
7. Ի կատարումն փոխարկելի փոխառության պայմանագրի (որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու) բաժնետոմսերի թողարկման և փոխատուի օգտին տեղաբաշխման դեպքում

Ընկերության այլ բաժնետերերի կամ Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքը չի կիրառվում, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի:

8. Ի կատարումն փոխարկելի փոխառության պայմանագրի, որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու, բաժնետոմսերը թողարկվում են Ընկերության կանոնադրությամբ սահմանված՝ հայտարարված բաժնետոմսերի քանակի և անվանական արժեքի սահմաններում (եթե այդպիսին սահմանված է):
9. Ի կատարումն փոխարկելի փոխառության պայմանագրի, որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու, թողարկված բաժնետոմսերը համարվում են վճարված դրանց տեղաբաշխման պահին:»:

Հոդված 2. Օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ նախադասությամբ.

«Սույն մասի պահանջները չեն տարածվում փոխարկելի փոխառության պայմանագրի հիման վրա բաժնետոմսերի փոխարկման դեպքերի վրա:»:

Հոդված 3. Օրենքի 44-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 44. Ընկերության տեղաբաշխվող բաժնետոմսերի գինը

1. Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումը կատարվում է դրանց շուկայական արժեքով, բայց ոչ պակաս անվանական արժեքից: Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարումն Ընկերության հիմնադրման ժամանակ իրականացվում է հիմնադիրների կողմից՝ բաժնետոմսի անվանական արժեքով:

2. Ընկերությունն իրավունք ունի լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխել դրանց շուկայական արժեքից ցածր, եթե՝

1) տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսեր ունեցող բոլոր բաժնետերերի կողմից նման բաժնետոմսեր ձեռք բերելու նախապատվության իրենց իրավունքն իրականացնելիս.

2) բաժնետոմսերի տեղաբաշխման համար Ընկերությունն օգտվում է տեղաբաշխողի (միջնորդի) ծառայություններից: Տեղաբաշխման գինն այս դեպքում կարող է շուկայական արժեքից ցածր լինել միայն տեղաբաշխողին (միջնորդին) վճարվող վարձատրության չափով, որը պետք է սահմանվի որպես տոկոսադրույք՝ տեղաբաշխվող բաժնետոմսի գնի նկատմամբ

3) սույն օրենքի 41-րդ հոդվածով սահմանված կարգով տեղաբաշխում է աշխատակիցներին տրամադրվող բաժնետոմսեր.

4) ՍԵՅՖ պայմանագրի հիման վրա տեղաբաշխում է բաժնետոմսեր.

5) Ընկերությունը փոխարկելի փոխառության պայմանագրի հիման վրա տեղաբաշխում է բաժնետոմսեր:»:

Հոդված 4. Օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասը «սահմանված չէ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ խոշոր գործարք հանդիսացող փոխարկելի փոխառության պայմանագրի, որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու և որի կնքելու մասին որոշումը ընդունում է ժողովը՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի միաձայնությամբ, իսկ սույն օրենքի 35.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում՝ կանոնադրությամբ սահմանված ձայների քանակով:» բառերով:

Հոդված 5. Օրենքի 61.2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «այլ բան նախատեսված չէ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ

կապված այլ գործարք հանդիսացող փոխարկելի փոխառության պայմանագրի, որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու և որի կնքելու մասին որոշումը ընդունում է ժողովը՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի միաձայնությամբ, իսկ սույն օրենքի 35.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում՝ կանոնադրությամբ սահմանված ձայների քանակով» բառերով:

Հոդված 6. Օրենքի 64-րդ հոդվածը լրացնել նոր 2.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«2.1. Եթե փոխարկելի փոխառության պայմանագրի կնքումը հանդիսանում է սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված գործարք, ապա այն ենթակա է նաև հաստատման ժողովի կողմից՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի միաձայնությամբ, իսկ սույն օրենքի 35.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում՝ կանոնադրությամբ սահմանված ձայների քանակով:»:

Հոդված 7. Օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասում «Գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածով սահմանված գործարք հանդիսացող փոխարկելի փոխառության պայմանագրի, որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու և որի կնքելու մասին որոշումը ընդունում է ժողովը՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի միաձայնությամբ, իսկ սույն օրենքի 35.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների՝ կանոնադրությամբ սահմանված քանակով» բառերով:

Հոդված 8. Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր «25.2)» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«25.2) Ընկերության կողմից փոխարկելի փոխառության պայմանագրի կնքման մասին որոշման ընդունումը, որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու, ինչպես նաև այդպիսի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին որոշման ընդունումը.»:

Հոդված 9. Օրենքի 68-րդ հոդվածը լրացնել նոր 4.2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.2. Սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 25.2-րդ կետով սահմանված հարցով որոշումներն ընդունում է ժողովը՝ Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի միաձայնությամբ: Ընկերության կանոնադրությամբ կարող է սահմանվել, որ սույն մասով սահմանված որոշումն ընդունում է ժողովը՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի ձայների առնվազն 3/4-ով:»

Հոդված 10. Եզրափակիչ և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կ-990²-24.12.2024-ՏՀ-011/1

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել նոր 35.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 35.1. Ի կատարումն փոխարկելի փոխառության պայմանագրի Ընկերության բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման կարգը**

1. Ընկերությունը կարող է կնքել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 886.2-րդ հոդվածով սահմանված փոխարկելի փոխառության պայմանագիր:
2. Փոխարկելի փոխառության պայմանագրի (որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու) կնքման մասին որոշումն ընդունում է ժողովը՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի միաձայնությամբ:
3. Ընկերության կանոնադրությամբ կարող է սահմանվել, որ փոխարկելի փոխառության պայմանագրի (որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու) կնքման մասին որոշումն ընդունում է ժողովը՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի ձայների առնվազն 3/4-ով:
4. Եթե ժողովը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով կայացրել է փոխարկելի փոխառության պայմանագիր կնքելու մասին որոշում, ապա այդ որոշմանը դեմ քվեարկած բաժնետերն ունի սույն օրենքի 47-րդ հոդվածով սահմանված նախապատվության իրավունքը: Ընդ որում նախապատվության իրավունքի կիրառման դեպքում Ընկերությունը հատուցում է միայն փոխատուի վնասները՝ ազատվելով պարտավորությունը բնեղենով կատարելուց:
5. Ի կատարումն փոխարկելի փոխառության պայմանագրի, որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու, փոխատուն պայմանագրով սահմանված ժամկետում Ընկերության գործադիր մարմնին է ներկայացնում փոխարկման գրավոր պահանջ: Եթե փոխարկելի փոխառության պայմանագրով նախատեսված է, որ փոխարկումը պայմանավորված է պայմանագրով սահմանված պայմանների վրա հասնելով, փոխարկման գրավոր պահանջը պետք է պարունակի այդ պայմանները վրա հասնելու հիմնավորումը: Փոխարկելի փոխառության պայմանագրով կարող է սահմանվել, որ սույն մասում նշված պահանջը համարվում է ներկայացված՝ պայմանագրով սահմանված պայմանների վրա հասնելու դեպքում:
6. Ի կատարումն փոխարկելի փոխառության պայմանագրի, որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջն Ընկերության գործադիր մարմնի կողմից ստացվելուց (պայմանագրով սահմանված դեպքում՝ ստացված համարվելուց), իսկ եթե փոխարկելի փոխառության պայմանագրով նախատեսված է, որ փոխարկումը պայմանավորված է պայմանագրով սահմանված պայմանների վրա հասնելով, ապա այդ պայմանների վրա հասնելուց և սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջն Ընկերության գործադիր մարմնի կողմից ստացվելուց (պայմանագրով սահմանված դեպքում՝ ստացված համարվելուց) հետո 60-օրյա ժամկետում Ընկերությունը պարտավոր է փոխարկելի փոխառության պայմանագրի համաձայն սահմանված տեսակի, դասի և քանակի բաժնետոմսերը թողարկել և տեղաբաշխել փոխատուի օգտին:

7. Ի կատարումն փոխարկելի փոխառության պայմանագրի (որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու) բաժնետոմսերի թողարկման և փոխատուի օգտին տեղաբաշխման դեպքում Ընկերության այլ բաժնետերերի կամ Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքը չի կիրառվում, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի:
8. Ի կատարումն փոխարկելի փոխառության պայմանագրի, որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու, բաժնետոմսերը թողարկվում են Ընկերության կանոնադրությամբ սահմանված՝ հայտարարված բաժնետոմսերի քանակի և անվանական արժեքի սահմաններում (եթե այդպիսին սահմանված է):
9. Ի կատարումն փոխարկելի փոխառության պայմանագրի, որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու, թողարկված բաժնետոմսերը համարվում են վճարված դրանց տեղաբաշխման պահին:»:

Հոդված 2. Օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ նախադասությամբ.

«Սույն մասի պահանաջները չեն տարածվում փոխարկելի փոխառության պայմանագրի հիման վրա բաժնետոմսերի փոխարկման դեպքերի վրա:»:

Հոդված 3. Օրենքի 44-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 44. Ընկերության տեղաբաշխվող բաժնետոմսերի գինը

1. Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումը կատարվում է դրանց շուկայական արժեքով, բայց ոչ պակաս անվանական արժեքից: Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարումն Ընկերության հիմնադրման ժամանակ իրականացվում է հիմնադիրների կողմից՝ բաժնետոմսի անվանական արժեքով:

2. Ընկերությունն իրավունք ունի լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխել դրանց շուկայական արժեքից ցածր, եթե՝

1) տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսեր ունեցող բոլոր բաժնետերերի կողմից նման բաժնետոմսեր ձեռք բերելու նախապատվության իրենց իրավունքն իրականացնելիս.

2) բաժնետոմսերի տեղաբաշխման համար Ընկերությունն օգտվում է տեղաբաշխողի (միջնորդի) ծառայություններից: Տեղաբաշխման գինն այս դեպքում կարող է շուկայական արժեքից ցածր լինել միայն տեղաբաշխողին (միջնորդին) վճարվող վարձատրության չափով, որը պետք է սահմանվի որպես տոկոսադրույք՝ տեղաբաշխվող բաժնետոմսի գնի նկատմամբ÷

3) սույն օրենքի 41-րդ հոդվածով սահմանված կարգով տեղաբաշխում է աշխատակիցներին տրամադրվող բաժնետոմսեր.÷

4) ՍԵՅՖ պայմանագրի հիման վրա տեղաբաշխում է բաժնետոմսեր.÷

5) Ընկերությունը փոխարկելի փոխառության պայմանագրի հիման վրա տեղաբաշխում է բաժնետոմսեր:»:

Հոդված 4. Օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասը «սահմանված չէ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ խոշոր գործարք հանդիսացող փոխարկելի փոխառության պայմանագրի, որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու և որի կնքելու մասին որոշումը ընդունում է ժողովը՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի միաձայնությամբ, իսկ սույն

օրենքի 35.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում՝ կանոնադրությամբ սահմանված ձայների քանակով:» բառերով:

Հոդված 5. Օրենքի 61.2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «այլ բան նախատեսված չէ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարք հանդիսացող փոխարկելի փոխառության պայմանագրի, որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու և որի կնքելու մասին որոշումը ընդունում է ժողովը՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի միաձայնությամբ, իսկ սույն օրենքի 35.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում՝ կանոնադրությամբ սահմանված ձայների քանակով» բառերով:

Հոդված 6. Օրենքի 64-րդ հոդվածը լրացնել նոր 2.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«2.1. Եթե փոխարկելի փոխառության պայմանագրի կնքումը հանդիսանում է սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված գործարք, ապա այն ենթակա է նաև հաստատման ժողովի կողմից՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի միաձայնությամբ, իսկ սույն օրենքի 35.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում՝ կանոնադրությամբ սահմանված ձայների քանակով:»:

Հոդված 7. Օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասում «Գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածով սահմանված գործարք հանդիսացող փոխարկելի փոխառության պայմանագրի, որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու և որի կնքելու մասին որոշումը ընդունում է ժողովը՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի միաձայնությամբ, իսկ սույն օրենքի 35.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների՝ կանոնադրությամբ սահմանված քանակով» բառերով:

Հոդված 8. Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր «25.2)» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«25.2) Ընկերության կողմից փոխարկելի փոխառության պայմանագրի կնքման մասին որոշման ընդունումը, որով Ընկերությունը հանդիսանում է փոխառու, ինչպես նաև այդպիսի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին որոշման ընդունումը.»:

Հոդված 9. Օրենքի 68-րդ հոդվածը լրացնել նոր 4.2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.2. Սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 25.2-րդ կետով սահմանված հարցով որոշումներն ընդունում է ժողովը՝ Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի միաձայնությամբ: Ընկերության կանոնադրությամբ կարող է սահմանվել, որ սույն մասով սահմանված որոշումն ընդունում է ժողովը՝ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի ձայների առնվազն 3/4-ով:»

Հոդված 10. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-990-24.12.2024-ՏՀ-011/0), «ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-990.1-24.12.2024-ՏՀ-011/0), «ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-990.2-24.12.2024-ՏՀ-011/0) ԵՒ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-990.3-24.12.2024-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	Կառավարություն	«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր	Առաջարկվում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «փոփոխություններ» բառը փոխարինել «փոփոխություն» բառով՝ հաշվի առնելով, որ նախագծում կատարվում է միայն մեկ փոփոխություն:	Ընդունվել է: Կատարվել 1 համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 30-րդ հոդվածի 2-րդ մաս	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասում «պահանջները չեն խոչընդոտում» բառերը փոխարինել «պահանջները չեն տարածվում» բառերով, իսկ «փոխարկմանը» բառը՝ «փոխարկման դեպքերի վրա» բառերով՝ հաշվի առնելով հասկացությունների տարբեր օրենքներում	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությունը:		
3.	Կառավարություն	«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նոր լրացվող 33.1-ին հոդվածի 4-րդ մաս	Վրիպակը շտկելու նպատակով առաջարկվում է 2-րդ հոդվածով նոր լրացվող Օրենքի 33.1-ին հոդվածի 4-րդ մասում «նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը» բառերը փոխարինել «նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դիմումը» բառերով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նոր լրացվող 33.1 հոդվածի 5-րդ մաս	Հաշվի առնելով, որ նախագծի 2-րդ հոդվածով նոր լրացվող Օրենքի 33.1-ին հոդվածի 3-րդ մասում ընկերության մասնակցի կողմից ներկայացվում է «լրացուցիչ ավանդ»-ի ներդրման հիման վրա իր բաժնեմասի անվանական արժեքի ավելացման դիմում՝ առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածով նոր լրացվող Օրենքի 33.1-ին հոդվածի 5-րդ մասում «կամ» բառը փոխարինել «լրացուցիչ ավանդը, իսկ» բառերով, «փոխատուի» բառից հետո լրացնել «դեպքում՝» բառը:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
5.	Կառավարություն	«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր	Առաջարկվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «լրացումներ» բառը փոխարինել «լրացում» բառով ՝ հաշվի առնելով, որ նախագծում կատարվում է միայն մեկ լրացում:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
6.	Կառավարություն	«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով	Առաջարկվում է բաժնետերերի նախապատվության իրավունքի կիրառության դեպքում փոխատուի իրավունքների շրջանակը հստակեցնելու նպատակով՝ նախագծի 1-ին հոդվածով նոր լրացվող Օրենքի 35.1-ին հոդվածի 4-	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		նոր լրացվող 35.1 հոդվածի 4-րդ մաս	րդ մասում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Ընդ որում նախապատվության իրավունքի կիրառման դեպքում Ընկերությունը հատուցում է միայն փոխատուի վնասները՝ ազատվելով պարտավորությունը բնեղենով կատարելուց»:		
7.	Կառավարություն	«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-4-րդ կետեր	Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-4-րդ կետերի «:» փոխարինել «.» կետադրական նշանով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
8.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում» լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է 1-ին հոդվածում «109-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել «3-րդ մասի 5-րդ կետում «:» նշանը փոխարինել «.» նշանով,» բառերով՝ հաշվի առնելով, որ հոդվածի 3-րդ մասը լրացվում է նոր 6-րդ կետով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
9.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում» լրացումներ կատարելու մասին» օրենքի 4-րդ հոդված	Առաջարկվում է 4-րդ հոդվածում «Եզրափակիչ և անցումային դրույթներ» բառերը փոխարինել «Եզրափակիչ մաս» բառերով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
10	Կառավարություն	«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու	Առաջարկվում է հոդվածների վերնագրերում «Եզրափակիչ և անցումային դրույթներ» բառերը փոխարինել «Եզրափակիչ մաս և անցումային դրույթ» բառերով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդված			